ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
ՀԵՌՈՒՍՏԱԱՇՏԱՐԱԿԻ ՓՈՔՐ ՎԵՐԵԼԱԿԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ԵՎ
ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՏՈՒՑՄԱՆ ԳՆՄԱՆ
N ՀՀՌՑ-ԳՀԾՁԲ-18/16

ք. Երևան «18» 05 2018թ.

«Հայաստանի հեռուստատեսային և ռադիոհաղորդիչ ցանց» ՓԲ ընկերությունը, ի դեմս գլխավոր տնօրեն Գ. Ալոյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ «Պատվիրատու», մի կողմից, «ԻՄԷՔՍ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ն, ի դեմս ընկերության տնօրեն Ռ. Մանուչարյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ «Կատարող», մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը, այսուհետ՝ «Պայմանգիր», հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է ընկերության հեռուստաաշտարակի փոքր վերելակի վերանորոգման և տեխնիկական սպասարկման ծառայությունների մատուցման պարտավորությունը, այսուհետ՝ «Ծառայություն»՝ համաձայն Պայմանագրի անբաժանելի մասը կազմող Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի (Հավելված 1) պահանջների:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող Ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է Պայմանագրի Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող Ծառայություն.

ա) Չընդունել Ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի Ծառայությունը պայմանագրին համապատասխանող Ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու Պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել Պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու Ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել Պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է Պայմանագիրը: Կատարողի կողմից Պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված Ծառայությունը չի համապատասխանում Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է Ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված Ծառայության արդյունքը, իսկ Ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև Պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով սահմանված պայմաններով ապահովել Ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված Ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին:

3.2 Եթե մատուցված Ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված Ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված Ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված Ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա Ծառայության գինը կազմում է 3 240 000 (երեք միլիոն երկու հարյուր քառասուն հազար) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած Ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված 2) նախատեսված չափերով և ամիսներին:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում Ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող Ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

5.3 Պայմանագրով նախատեսված Ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված Ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են Ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող Ծառայության ծավալների կամ ձեռք բերվող Ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել Ծառայության օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով Ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով Ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

7.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.11 Սույն պայմանագիրը կազմված է 12 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Պատվիրատու՝	**Կատարող՝** «ԻՄԷՔՍ ԳՐՈՒՊ» ՍՊԸ
ՀՀ, ք. Երևան, Նորք, Հովսեփյան 95	ՀՀ ք. Երևան, Թբիլիսյան խճուղի 25
«Ամերիաբանկ» ՓԲԸ	«Ինեկոբանկ» ՓԲԸ
հ/հ 1570027609970100	հ/հ 2050022093071001
ՀՎՀՀ 01501898	ՀՎՀՀ 00847479
	էլ. հասցեն՝ office@imexgroup.am
Գ. Ալոյան	Տնօրեն՝ Ռ. Մանուչարյան

Հավելված N 1
«18» 05 2018 կնքված
ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության							
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը *	չափման միավորը	ընդհանուր գինը /ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	մատուցման	
						հասցեն	Ժամկետը**
1	50751100/2	Բնութագիրը ներկայացված է ստորև	դրամ		1	ՀՀ, ք. Երևան, Նորք, Հովսեփյան 95	Պայմանագրի կնքման պահից 3 տարի

- *Անխափան աշխատանքն ու անվտանգ շահագործումն ապահովելու և վթարներն ու աշխատանքի խափանումները կանխարգելելու նպատակով՝ վերելակի (ներառյալ՝ հորանները) ամբողջական տեխնիկական գննություն ու սպասարկում՝ շաբաթական ոչ պակաս, քան մեկ անգամ (Կատարողի ուժերով ու միջոցներով):*
- *Վթարների ու աշխատանքի խափանումների վերաբերյալ Պատվիրատուի կանչերին արձագանքում (մասնագետի ժամանում)՝ համապատասխան կանչի պահից ոչ ուշ, քան մեկ ժամվա ընթացքում (Կատարողի ուժերով ու միջոցներով):*
- *Աշխատանքի խափանման վերացում՝ համապատասխան կանչի պահից ոչ ուշ, քան չորս ժամվա ընթացքում (Կատարողի ուժերով ու միջոցներով):*
- *Վթարի վերացում՝ համապատասխան կանչի պահից՝ ոչ ավել, քան մեկ աշխատանքային օրվա ընթացքում (Պատվիրատուի կողմից ձեռբերվող պահեստամասերով և Կատարողի ուժերով ու միջոցներով):*
- *Անսարքության վերացում ըստ անհրաժեշտության կամ Պատվիրատուի պահանջով՝ աշխատանքները սկսելու համար Պատվիրատուի կողմից սահմանված պահից ոչ ավել, քան երեք աշխատանքային օրվա ընթացքում (Պատվիրատուի կողմից ձեռբերվող պահեստամասերով և Կատարողի ուժերով ու միջոցներով):*
- *Անվտանգության տեխնիկայի կանոնների պահպանում՝ մշտապես:*

Աշխատանքների ցանկը ներկայացված է Հավելված 1.1-ով

Պատվիրատու՝
ՀՀ, ք. Երևան, Նորք, Հովսեփյան 95
«Ամերիաբանկ» ՓԲԸ
h/h 1570027609970100
ՀՎՀՀ 01501898

Գ. Ալոյան

(ստորագրությունը)
Կ.Տ.

Կատարող՝ ԻՄԷՔՍ ԳՐՈՒՊ» ՍՊԸ
ՀՀ ք. Երևան, Թբիլիսյան խճուղի 25
«Ինեկոբանկ» ՓԲԸ
h/h 2050022093071001
ՀՎՀՀ 00847479
էլ. հասցեն՝ office@imexgroup.am

Տնօրեն՝ Ռ. Մանուչարյան

(ստորագրությունը)
Կ.Տ.

Հավելված 1.1

ՑԱՆԿ

Անվտանգության տեխնիկայի պահանջների պահպանման, ընթացիկ զննման (տեխնիկական սպասարկման, շահագործման և նորոգումների աշխատանքների)

Նախապատրաստական գործողություններ.
ա) խցիկի բացակայության ժամանակ հորանի դռների փեղկերի բացման բացառությունը,
բ) հորանի ցանկապատման սարքինության ստուգում:

Մեքենայական սրահ.
ա) մեքենայական սրահից էլեկտրական սխեմայի տեղափոխում՝ «ղեկավարում մեքենայական սրահից» ռեժիմի, խցիկի տեղակայում հարկերի արանքում (հակակշռի տեղակայում թափամեղմիչների վրա),
բ) ազատել ռեդուկտորը բեռնվածությունից,
գ) ներանցիչ հոսանքահատիչի անջատում:

Ավտոմատ անջատիչ.
Էլ.լարերի հպակային միացումների ստուգում և ձգում:

Մագնիսական կայան.
ա) բոլոր ռելեների և կոնտակտորների մակերեսների մաքրում այրուքագոյացումից,
բ) ժամանակի ռելեի ստուգում,
գ) ապահովիչների ստուգում,
դ) մագնիսական կայանի մետաղական կմախքի հողանցման միացման ստուգում:

Արգելակման համակարգ.
ա) արգելակման կիսակցորդիչի վիճակի ստուգում,
բ) ֆրիկցիոն երեսպատումների վիճակի ստուգում,
գ) սարքինության ստուգում աշխատանքի ժամանակ:

Ռեդուկտոր.
ա) ճոպանատար անիվի ակոսների վիճակի ստուգում,
բ) ճոպանատար անիվի ճաքերի և կոտրվածքների առկայության ստուգում,
գ) ճոպանատար անիվի և արգելակման կիսակցորդիչի միացման հուսալիության ստուգում,
դ) ռեդուկտորի տարրերում խաղի բացակայության ստուգում,
ե) յուղի առկայության ստուգում ռեդուկտորում:

Էլեկտրական շարժիչ.
ա) ընթացքի ժամանակ էլ.շարժիչի աշխատանքի ստուգում,
բ) կիսակցորդիչների միացման մատիկների ստուգում,
գ) լարերի հպակային միացումների ստուգում և ձգում,
դ) էլ.շարժիչի հողանցման միացման շղթայի ստուգում:

Ծայրային անջատիչներ.
ա) բլոկ-կոնտակտի ստուգում և մաքրում,
բ) հպակի բացվածքի կարգավորում:

Քարշող և արագության սահմանափակիչի ճոպաններ.
ա) փնջերի կտրման բացակայության ստուգում ճոպանների վրա,
բ) շեղման առկայության դեպքում բալանսիրների հավասարեցում:

Հորան.
ա) Խցիկի տանիքին բարձրանալու համար դրա տեղակայումը,
բ) մեքենայական սրահից էլեկտրական սխեմայի տեղափոխում՝ «ղեկավարում խցիկի տանիքից» ռեժիմի և դրա աշխատանքի ստուգում,
գ) որսիչների և կախովի ճոպանների թուլության հպակների աշխատանքի ստուգում,
դ) խցիկի և հակակշռի ուղղորդիչների ուղղում չափաձողով (շտիխմասս):

Խցիկի և հորանների դռների ավտոմատ փականներ.
ա) բացակների ստուգում և կարգաբերում,
բ) փականների աշխատանքի հուսալիության ստուգում:

Խցիկ.
ա) փեղկերի վիճակի ստուգում,
բ) վերելակի աշխատանքի ստուգում տարբեր ռեժիմներում (նորմալ, «ղեկավարում մեքենայական սրահից», «ղեկավարում խցիկի տանիքից»)՝ ըստ սկզբունքային էլեկտրական սխեմայի:

Վերելակի վերանորոգման հետ կապված աշխատանքներ.
1. Կարգավորել ուղղորդիչները, արգելակները, շարժաբերը
2. Տեղակայել մեխանիկական եզրանջատիչներ՝ առաջին և վերջին հարկերում
3. Տեղակայել վերելակի ղեկավարում և հեռախոսակապ խցիկի միջից

Վերելակների տեխնիկական սպասարկման և շահագործման ժամանակ էլեկտրամեխանիկին և այլ սպասարկող անձնակազմին արգելվում է՝
ա) վերելակի խցիկի և հորանի բաց դռների դեպքում կատարել վերելակի գործարկում հարկային հարթակից,
բ) կատարել վերելակի գործարկում՝ անմիջապես ազդելով այն սարքերի վրա, որոնք էլ.շարժիչին հաղորդում են լարում,
գ) աշխատանքից հանել վերելակի ապահովիչ և բլոկավորող սարքերը,
դ) նորոգել և զննել լարման տակ գտնվող սարքավորումների առկայության դեպքում,
ե) օգտվել 42Վ լարումից ավել շարժական էլեկտրոլամպերից,
զ) կատարել ցանկացած աշխատանք՝ գտնվելով շարժվող խցիկի տանիքին,
է) աշխատանքի ավարտից հետո խցիկի տանիքի վրա թողնել այրվող քսանյութեր, գործիքներ և պահեստամասեր,
ը) կանգնել հորանի ելուստների և որմնախորշերի վրա,
թ) իրականացնել աշխատանք միաժամանակ երկու հարթություններում (մեքենայական սրահում, խցիկի տանիքին և գետնախորշում),
ժ) ուղևորների տեղափոխման ժամանակ կատարել ցանկացած աշխատանք վերելակային կահավորանքի վրա:

Անսարքությունների ցանկ, որոնց հայտնաբերման դեպքում վերելակի շահագործումը պետք է դադարեցնել, մինչև դրանց վերացնելը՝
ա) հորանի դռների փականների և ապահովիչ հպակի անսարքություն,
բ) խցիկն ինքնակամ շարժվում է,
գ) չեն գործում վերին և ստորին ծայրային հարկային անջատիչները,
դ) խցիկը շարժվում է վերև՝ ներքև շարժվելու փոխարեն, և հակառակը,
ե) անսարք է արգելակման համակարգը,
զ) վնասված է հորանի ցանկապատումը,
է) խախտված է խցիկի ճշգրիտ հարկային կանգառը,
ը) քարշող կամ արագության սահմանափակիչի ճոպանի խզման կամ մաշվածության դեպքում,
թ) երբ ճոպանատար անիվի վրայից ճոպանները սահում են,
ժ) երբ արագության սահմանափակիչի անիվի վրայից ճոպանները սահում են,
ի) երբ խցիկն ինքնակամ նստում է որսիչների վրա:

Պատվիրատու՝
ՀՀ, ք. Երևան, Նորք, Հովսեփյան 95

«Ամերիաբանկ» ՓԲԸ

h/h 1570027609970100

ՀՎՀՀ 01501898

Գ. Այոյան

(ստորագրությունը)
Կ.Տ.

Կատարող՝ ԻՄԷՔՍ ԳՐՈՒՊ» ՍՊԸ
ՀՀ ք. Երևան, Թբիլիսյան խճուղի 25

«Ինեկոբանկ» ՓԲԸ

h/h 2050022093071001

ՀՎՀՀ 00847479
Էլ. հասցեն՝ office@imexgroup.am

Տնօրեն Ռ. Մանուչարյան

(ստորագրությունը)
Կ.Տ.

Հավելված N 2
«18» 05 20 թ. կնքված
ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*
2018-2021թթ.

ՀՀ դրամ

Ծառայության							
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2018-2021թթ-ին՝ ըստ տարիների՝ ամսավճարով				
			2018թ.	2019թ.	2020թ.	2021թ.	Ընդամենը
1	50751100/2	ՀՀՌՑ ՓԲ ընկերության հեռուստաաշտարակի փոքր վերելակի վերանորոգման և տեխնիկական սպասարկման ծառայության ձեռքբերում	630 000	1 080 000	1 080 000	450 000	3 240 000

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*
2018թ.

ՀՀ դրամ

Ծառայության														
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	Նախատեսվում է ֆինանսավորել 2018թ.՝ ըստ ամիսների											
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը տարի
1	50751100/2	ՀՀՌՑ ՓԲ ընկերության հեռուստաաշտարակի փոքր վերելակի վերանորոգման և տեխնիկական սպասարկման ծառայության ձեռքբերում	-	-	-	-	-	90 000	180 000	270 000	360 000	450 000	540 000	630 000	630 000

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են ամբողջական կարգով:*

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*
2019թ.

ՀՀ դրամ

Ծառայության														
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	Նախատեսվում է ֆինանսավորել 2019թ.՝ ըստ ամիսների											
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը տարի
1	50751100/2	ՀՀՌՑ ՓԲ ընկերության հեռուստաաշտարակի փոքր վերելակի վերանորոգման և տեխնիկական սպասարկման ծառայության ձեռքբերում	90 000	180 000	270 000	360 000	450 000	540 000	630 000	720 000	810 000	900 000	990 000	1 080 000	1 080 000

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:*

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*
2020թ.

ՀՀ դրամ

Ծառայության														
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	Նախատեսվում է ֆինանսավորել 2020թ.՝ ըստ ամիսների											
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը տարի
1	50751100/2	ՀՀՌՑ ՓԲ ընկերության հեռուստաաշտարակի փոքր վերելակի վերանորոգման և տեխնիկական սպասարկման ծառայության ձեռքբերում	90 000	180 000	270 000	360 000	450 000	540 000	630 000	720 000	810 000	900 000	990 000	1 080 000	1 080 000

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:*

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*
2021թ.

ՀՀ դրամ

Ծառայության														
հրավերով նախատեսված չափաբաժնի համար	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	Նախատեսվում է ֆինանսավորել 2021թ.՝ ըստ ամիսների												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը տարի
1	50751100/2	ՀՀՌՑ ՓԲ ընկերության հեռուստաաշտարակի փոքր վերելակի վերանորոգման և տեխնիկական սպասարկման ծառայության ձեռքբերում	90 000	180 000	270 000	360 000	450 000	450 000	450 000	450 000	450 000	450 000	450 000	450 000	450 000

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:*

Պատվիրատու՝

ՀՀ, ք. Երևան, Նորք, Հովսեփյան 95

«Ամերիաբանկ» ՓԲԸ

հ/հ 1570027609970100

ՀՎՀՀ 01501898

Գ. Ալոյան

(ստորագրությունը)
Կ.Տ.

Կատարող՝ ԻՄԷՔՍ ԳՐՈՒՊ» ՍՊԸ

ՀՀ ք. Երևան, Թբիլիսյան խճուղի 25

«Ինեկոբանկ» ՓԲԸ

հ/հ 2050022093071001

ՀՎՀՀ 00847479
էլ. հասցեն՝ office@imexgroup.am

Տնօրեն Ռ. Մանուչարյան

(ստորագրությունը)
Կ.Տ.